ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» նոյեմբերի 2012թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի հ.345-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի «Երևան քաղաքում ավտոմայրուղու կառուցման ներդրումային ծրագրի մասին» հ.271-Ա որոշումը, հաշվի առնելով «Ե.Վ.Ր. ՕՅԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության համաձայնությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն «Ե.Վ.Ր. ՕՅԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 25.04.2003թ. հ.1019307 վկայական) Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2 հասցեում գտնվող 6586.0քմ մակերեսով հողամասից 590.79քմ մակերեսով հողամասը Երևան համայնքի սեփականություն հանդիսացող կից տարածքում գտնվող համարժեք 590.79քմ հողամասի հետ փոխանակելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2 հասցեում գտնվող 6586.0քմ մակերեսով հողամասից 590.79քմ (445.75քմ+145.04քմ) մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի «Երևան քաղաքում ավտոմայրուղու կառուցման ներդրումային ծրագրի մասին» հ.271-Ա, Երևանի քաղաքապետի 2012 թվականի ապրիլի 4-ի հ.3026-Ա և մայիսի 2-ի հ.3636-Ա որոշումներով Ծովակալ Իսակովի պողոտայի և Լենինգրադյան փողոցի միջև նախատեսվել և իրականացվել է ավտոմայրուղու կառուցման աշխատանքներ:

Ծ. Իսակովի պողոտան Լենինգրադյան փողոցին կապող ավտոմայրուղու կառուցման շինարարությանը խոչընդոտ է հանդիսանում ուղեանցների ծրագրերի վրա առկա «Ե.Վ.Ր. ՕՅԼ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հողամասը:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կողմից բանակցությունների միջոցով ձեռք բերված պայմանավորվածությունները՝ աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունն առաջարկել է Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2 հասցեում գտնվող ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 6586.0քմ մակերեսով հողամասից 590.79քմ (445.75քմ+145.04քմ), (ծածկագրեր՝ 445.75քմ-01-006-989-001 և 145.04քմ-01-006-621-001) մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող համարժեք հողամասի հետ:

Քննարկվող հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում են 4-րդ գոտում:

«Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի «Երևան քաղաքում ավտոմայրուղու կառուցման ներդրումային ծրագրի մասին» հ.271-Ա որոշման կատարումն ապահովելու հանգամանքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ